## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
## № ԳՀԱՊՁԲ-7/1-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 29.05.2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «ՏԻԳՎԱՆ» ՍՊԸ-ն /համատեղ գործունեության՝ կոնսորցիումի պայմանագիր «ՍՈՒԾՅՈՆԻԾ ՊՐՈԴՈՒԿՏԻ» ՏԴ ՍՊԸ/, ի դեմս տնօրեն Հ. Մկրտչյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, հիմք ընդունելով 28.12.2018թ. կնքված № ԳՀԱՊՁԲ-7/1-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայնագրի № 1 Հավելվածով նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

### 2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **53091500** (հիսուներեք միլիոն իննսունմեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 10.12.2019թ.:

### 3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի № 1 և № 2 Հավելվածները բաղկացած են 1 թերթից և հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

### 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «ՏԻԳՎԱՆ» ՍՊԸ |
| ք. Երևան, Բագրևանդի 5 | ՀՀ, Արարատի մարզ, Գեղանիստ գ, 26փ, 14տ |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 1570028193630100 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 04427695 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | տնօրեն |
| Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ | Հ. ՄԿՐՏՉՅԱՆ |

«ՏԻԳՎԱՆ» "ТИГВАН" "TIGVAN" 04427695

**Հավելված N 1**
**№ ԳՅԱՊՁԲ-7/1-1 N 1 համաձայնագրի**

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Գնման առարկան | Չ/մ | Քանակը | Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/ | Ապրանքների մատակարարումը 2019թ.-ին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 4-րդ եռամսյակ, ոչ ուշ քան 01.12.2019 |
| 1 | ապուրներ (Արագ պատրաստվող ապուր՝ բանջարեղենով (բորշչ)/) | կգ | 5500 | 1379 | 7584500 | 5500 |
| 2 | ապուրներ (Արագ պատրաստվող ապուր՝ ռսպով) | կգ | 5500 | 1379 | 7584500 | 5500 |
| 3 | ապուրներ (Արագ պատրաստվող ապուր՝ լոբով) | կգ | 5500 | 1379 | 7584500 | 5500 |
| 4 | ապուրներ (Արագ պատրաստվող ապուր՝ ոլոռով) | կգ | 5500 | 1379 | 7584500 | 5500 |
| 5 | ապուրներ (Արագ պատրաստվող ապուր՝ սիսեռով) | կգ | 5500 | 1379 | 7584500 | 5500 |
| 6 | ապուրներ (Արագ պատրաստվող ապուր՝ բրնձով) | կգ | 5500 | 1379 | 7584500 | 5500 |
| 7 | ապուրներ (Արագ պատրաստվող ապուր՝ մակարոնով) | կգ | 5500 | 1379 | 7584500 | 5500 |

**Հավելված N 2**
**№ ԳՅԱՊՁԲ-7/1-1 N 1 համաձայնագրի**

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/հ | Գնման առարկան | CPV-ի կոդը | Նախատեսվում է ֆինանսավորել 2019թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2019թ* | | |
|---|---|---|---|---|---|
| | | | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | ապուրներ (Արագ պատրաստվող ապուր՝ բանջարեղենով (բորշչ)/) | 15891400/510 | 7584500 | 7584500 | 7584500 |
| 2 | ապուրներ (Արագ պատրաստվող ապուր՝ ռսպով) | 15891400/511 | 7584500 | 7584500 | 7584500 |
| 3 | ապուրներ (Արագ պատրաստվող ապուր՝ լոբով) | 15891400/512 | 7584500 | 7584500 | 7584500 |
| 4 | ապուրներ (Արագ պատրաստվող ապուր՝ ոլոռով) | 15891400/514 | 7584500 | 7584500 | 7584500 |
| 5 | ապուրներ (Արագ պատրաստվող ապուր՝ սիսեռով) | 15891400/515 | 7584500 | 7584500 | 7584500 |
| 6 | ապուրներ (Արագ պատրաստվող ապուր՝ բրնձով) | 15891400/516 | 7584500 | 7584500 | 7584500 |
| 7 | ապուրներ (Արագ պատրաստվող ապուր՝ մակարոնով) | 15891400/517 | 7584500 | 7584500 | 7584500 |

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՏԻԳՎԱՆ» ՍՊԸ
ՀՀ, Արարատի մարզ, Գեղանիստ գյուղ, 14տ
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570028193630100
ՀՎՀՀ 04427695
տնօրեն

Հ. ՄԿՐՏՉՅԱՆ

«ՏԻԳՎԱՆ» "ТИГВАН" "TIGVAN" 04427695